ԿՈԴ
050.0112 Ն. 28.06.22

28 հունիսի 2022 թվականի թիվ 112-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԽՈՐՀՐԴԻ 2009 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 2-Ի ԹԻՎ 166-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Նպատակ ունենալով բանկերի և վարկային կազմակերպությունների կողմից հիմնական տնտեսական նորմատիվների վերաբերյալ հրապարակվող տեղեկատվությունը համապատասխանեցնել նորմատիվային դաշտում իրականացված փոփոխություններին, ինչպես նաև իրականացնել ապահովագրական ընկերությունների կողմից ներկայացվող հաշվետվությունների տեխնիկական ճշգրտումներ,

հիմք ընդունելով «Բանկերի և բանկային գործունեության մասին» օրենքի 43-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերը, «Վարկային կազմակերպությունների մասին» օրենքի 15-րդ հոդվածի 2-րդ մասը և 17-րդ հոդվածի 3-րդ մասը, «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» օրենքի 84-րդ հոդվածի 5-րդ մասը և 96-րդ հոդվածի 2-րդ մասը,

ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» օրենքի 2-րդ հոդվածի 3-րդ մասով, 20-րդ հոդվածի 1-ին մասի «ե» կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերով և 34-րդ հոդվածով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը

Ո ր ո շ ու մ է .

1. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2009 թվականի հունիսի 2-ի ««Ֆինանսական կազմակերպությունների և ֆինանսական խմբերի

կողմից տեղեկությունների հրապարակումը» Կանոնակարգ 8/03-ը հաստատելու մասին» թիվ 166-Ն որոշմամբ հաստատված «Ֆինանսական կազմակերպությունների և ֆինանսական խմբերի կողմից տեղեկությունների հրապարակումը» Կանոնակարգ 8/03-ում (այսուհետ՝ Կանոնակարգ) կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները.

1) Կանոնակարգի 16-րդ կետի 3-րդ ենթակետում.

ա. «ա4» պարբերությունում «ապա հրապարակում են Հավելված 8-ի հաշվետվության միայն «Վարկային կազմակերպության կանոնադրական կապիտալի նվազագույն չափը» և «Ընդհանուր (սեփական) կապիտալի նվազագույն չափը» տողերը» բառերը փոխարինել «հրապարակում են Հավելված 8-ի հաշվետվության միայն «Վարկային կազմակերպության կանոնադրական կապիտալի նվազագույն չափը», «Ընդհանուր (սեփական) կապիտալի նվազագույն չափը», «$Ն^5_1$ պահանջի և գրավի արժեքի սահմանային հարաբերակցության առավելագույն չափի նորմատիվից շեղումը», «$Ն^5_2$ պահանջի և գրավի արժեքի սահմանային հարաբերակցության առավելագույն չափի նորմատիվից շեղումը» տողերը» բառերով,

բ. «բ» պարբերությունը ««խախտում առկա չէ» բառերը,» բառերից հետո նոր տողից լրացնել հետևյալ բովանդակությամբ նախադասություններով.

«$Ն^5_1$ և $Ն^5_2$ նորմատիվների գծով Հավելված 2-ի «Նորմատիվի փաստացի մեծությունը՝ հաշվարկված բանկի համար» սյունակը լրացվում է ըստ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2008 թվականի փետրվարի 26-ի թիվ 50-Ն որոշմամբ հաստատված «Բանկերի հաշվետվությունները, դրանց ներկայացումը և հրապարակումը» կանոնակարգ 3-ի ձև թիվ 3 հաշվետվության «Փաստացի շեղում» սյունակի լրացման կարգի, իսկ «ՀՀ կենտրոնական բանկի սահմանած նորմատիվի թույլատրելի մեծությունը» սյունակը լրացվում է ըստ «Թույլատրելի շեղում» սյունակի լրացման կարգի: $Ն^5_1$ և $Ն^5_2$ նորմատիվների գծով Հավելված 8-ի «Փաստացի մեծությունը» սյունակը լրացվում է ըստ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2005 թվականի մարտի 3-ի թիվ 93-Ն որոշմամբ հաստատված «Վարկային կազմակերպությունների հաշվետվությունները, դրանց ներկայացումը և հրապարակումը» կանոնակարգ 15-ի ձև թիվ 3 հաշվետվության «Փաստացի շեղում» սյունակի լրացման կարգի, իսկ «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի սահմանած նորմատիվի թույլատրելի մեծությունը» սյունակը լրացվում է ըստ «Թույլատրելի շեղում» սյունակի լրացման կարգի:»,

գ. ««**Փաստացի մեծությունը**» սյունակում ամսական հաշվարկվող նորմատիվների համար արտացոլվում է հաշվետու ժամանակաշրջանի վերջին ամսվա նորմատիվի փաստացի մեծությունը:» նախադասությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

««**Փաստացի մեծությունը**» սյունակում օրական, շաբաթական և ամսական հաշվարկվող նորմատիվների համար արտացոլվում է համապատասխանաբար

հաշվետու ժամանակաշրջանի վերջին օրվա, շաբաթվա, ամսվա նորմատիվի փաստացի մեծությունը:»:

2) Կանոնակարգի Հավելված 2-ի աղյուսակը «Ն$^{4}_{2}$ Բանկի հետ կապված բոլոր անձանց գծով ռիսկի առավելագույն չափը» տողից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ տողերով.

«

Ն$^{5}_{1}$ պահանջի և գրավի արժեքի սահմանային հարաբերակցության առավելագույն չափի նորմատիվից շեղումը			
Ն$^{5}_{2}$ պահանջի և գրավի արժեքի սահմանային հարաբերակցության առավելագույն չափի նորմատիվից շեղումը			

»:

3) Կանոնակարգի Հավելված 3-ի աղյուսակում.

ա. «Ն$^{1}_{3}$ Մեկ փոխառուի գծով ռիսկի առավելագույն չափը» բառերը փոխարինել «Ն$^{3}_{1}$ Մեկ փոխառուի գծով ռիսկի առավելագույն չափը» բառերով, իսկ «Ն$^{2}_{3}$ Խոշոր փոխառուների գծով ռիսկի առավելագույն չափը» բառերը փոխարինել «Ն$^{3}_{2}$ Խոշոր փոխառուների գծով ռիսկի առավելագույն չափը» բառերով,

բ. «Ն$^{1}_{4}$ Բանկի հետ կապված մեկ անձի գծով ռիսկի առավելագույն չափը» բառերը փոխարինել «Ն$^{4}_{1}$ Բանկի հետ կապված մեկ անձի գծով ռիսկի առավելագույն չափը» բառերով, իսկ «Ն$^{2}_{4}$ Բանկի հետ կապված բոլոր անձանց գծով ռիսկի առավելագույն չափը» բառերը փոխարինել «Ն$^{4}_{2}$ Բանկի հետ կապված բոլոր անձանց գծով ռիսկի առավելագույն չափը» բառերով:

4) Կանոնակարգի Հավելված 4-ը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն սույն որոշման Հավելված 1-ի:

5) Կանոնակարգի Հավելված 5-ը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն սույն որոշման Հավելված 2-ի:

6) Կանոնակարգի Հավելված 8-ի աղյուսակում.

ա. 5-րդ տողում «Ն1^{1}» բառը փոխարինել «Ն1» բառով,

բ. 6-րդ տողում «Մեկ» բառը փոխարինել «Ն3 մեկ» բառերով,

գ. «Մեկ փոխառուի գծով ռիսկի առավելագույն չափը» պարբերությունից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ տողերով.

«

Ն$^{5}_{1}$ պահանջի և գրավի արժեքի սահմանային հարաբերակցության առավելագույն չափի նորմատիվից շեղումը			

$Ն^5_2$ պահանջի և գրավի արժեքի սահմանային հարաբերակցության առավելագույն չափի նորմատիվից շեղումը			

»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Հայաստանի Հանրապետության
կենտրոնական բանկի նախագահի
տեղակալ **Հովհաննես Խաչատրյան**

2022 թ. հունիսի 30
Երևան